

## ՏԵՂԵԿԱԼՔ

### **2022 թվականի առաջին կիսամյակում Սյունիքի մարզպետարան մուտք գործած և մարզպետարանից առաքված փաստաթղթերի վերաբերյալ**

2022 թվականի առաջին կիսամյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 6717 թղթակցություն, առաքվել՝ 4601 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ նախագահի աշխատակազմից՝ 1, ՀՀ Ազգային ժողովից՝ 8, ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից՝ 1, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 233, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 3, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 597, հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 694, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 1551, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 2455, գաղտնի թղթակցություն՝ 55, քաղաքացիներից՝ 1119 դիմում:

ՀՀ Սյունիքի մարզպետարան է վերահասցեագրվել 98 դիմում, որից՝ ՀՀ Ազգային ժողովից՝ 8, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 63, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 3, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 11, հանրապետական գործադիր մարմիններից՝ 13:

Մարզպետարան մուտք գործած փաստաթղթերին, սահմանված կարգով և ժամկետներում տրվել են համապատասխան ընթացք:

Պարբերաբար մարզպետի մոտ կատարվում է քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ քաղաքացիների ընդունելություն է կատարվում նաև մարզպետի՝ համայնքներ կատարած այցելությունների ժամանակ:

2022 թվականի առաջին կիսամյակում կատարվել է 81 քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպում են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվում է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Քաղաքացիների ընդունելության մասին տեղեկատվությունը ամենամսյա պարբերականությամբ ներկայացվում է նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: